

Վեց տերութիւնները կ'ըսեն Բ. Դրան:

–Եանիան Յունաստանի տուր:

Բ. Դուռը կը պատասխանէ Յոյներուն այն լեզուաւ՝ որով ասոնք պատասխանեցին ժամանակաւ Քսէրքսէսին.–

–*Եկուր, անձամբ ամ:*

10 Յունիս

Լրագրի մը մէջ հետեւեալը կարդացի.

«Նախընթաց օրն Իսկիտարի Պուրջուրլու գիւղը տան մը վրայ կայծակ իյնալով՝ մէջը գտնուող երկու կանանց ականջները խուլցուց»:

Ինձ կը թուի թէ կայծակ մ'ալ ուսումնական խորհրդոց սենեակին մէջ ինկած է, վասն զի աս ալ խուլցած է եւ չլսեր թաղային վարժարաններուն վիճակին վրայ խօսուած խօսքերը:

**

Այսօր ատաղձագործ մը կանչեցի եւ փայտէ գլուխ մը շինել տուի ինձի համար. եթէ *մուհաճիրին* մէկը յանկարծ գլուխս կտրէ՝ բնաւ հոգ չեմ ըներ. անմիջապէս փայտէ գլուխը կ'անցունեմ:

Առանց գլուխի պտըտելէն շատ աղէկ է փայտեայ գլուխ մ'ունենալ:

11 Յունիս

Սէմաֆօր լրագիրն կը ծանուցանէ, թէ իւր ցրուիչն օսմ. պանքայէն գումար մը առնելու դրկուած լինելով՝ յիշեալ պանքային գնացեր, դրամն առեր եւ անյայտ եղեր է. ուստի ով որ այս ցրուիչին ուր ըլլալը գիտէ՝ թո՛ղ *Սէմաֆօրին* գրասենեակն իմացունէ եւ վարձատրութիւնն ընդունի:

Մենք խրատ կու տանք *Սէմաֆօրին*, որ գանձու պաշտօնէութեան մէջ անգամ մը փնտրել տայ ցրուիչը...:

**

Քահանային մէկը... Եկեղեցոյն մէջ գանձանակէն մէճիտէ մը սխալմամբ գրպանը նետած պահուն ընկերը տեսաւ: Կէս ժամ վիճարանութենէ ետքը *մէճիտիէն* իրենց մէջ բաժանեցին: